

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ

Ի , այսուն միւն Յ - Հ - Ե - Ւ - Գ - Ի - Բ :
 Ես եմ Յովսէփ, ես եմ ձայնէր,
 Եւ շուրջ յեղարս իւր ակնարկէր,
 Նոքայերկիր անկան ՚ի վայր,
 Զմոհու ՚ի դէմս ածեալ տիպար :
 Ես եմ Յովսէփ, գարձեալ ձայնէր,
 Եւ սիրալիր աջ կարկառէր .
 Անկեալ զնոքաք գիրկս ՚ի համբոյր՝
 Բաղկամարած ֆարեալ զեղոյր :
 Նոքա թըմբքեալ կան անթոթափ
 Ընդ իւնդութիւն և ընդ սարսափ .
 Հունչ ՚ի նոսս գոգցես ՚ի սպառ
 Գոյր դադարեալ ՚ի տուրեառ :
 Ապա որդեմն ընկճեալ կական
 Զեղաւ ՚ի դուրս յորդահոսան :
 Վղիողորմ ողբոց նոցին
 Սահա արկանել կամէր ինքնին .
 Այլ թիր էր այն նըմին հընար,
 Ուր ընդ նոսին և ինքն իսկ լայր :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գործն է Գ - Ա - Լ , Յ - Ա - Ջ - Ա - Ն - Ի է Ժ - Ա - Լ - Ի :

Եւրոպացւոց խանութպաններուն սովորութիւնն է որ իրենց վաճառքին կամ արուեստին նշանը գրան վրայ կը կախին . գերձակ մ'ալ իրեն խանութիւն նշան կը շնիէ արձան մը վրան զգեստ ձգած՝ ձեռքն ալ մեծ մկրաս մը, որ կեցած զգեստ կը ձեէ . տակն ալ գրած . Հաւաստարիմ գերձակ : Մարդուն մեկուն սիրտը այրած ըլլալով գերձակներուն անհաւատարմութենէն, երբ կը տեսնէ այն գերձակին նշանը ու տակի ստորագրութիւնը կը կարգայ՝ կը ծիծաղի մտքէն, ու կը դառնայ քոլլիին “ Բարեկամ, կըսէ, ահս սա հաւատարիմ գերձակը ” որ խանութէն դուրս նստեր է, որպէս զի ներսիններուն խաբեքայութեանը մասնակից քըլլայ , :

Մարդի շաբ աւգամ անշունիւնք է լ գործէն, գիշ անգամ ճշուարութէամբ : Այն ճարդ իւր ըրածը նուն որ լիսէնի :

Թաղի մը աւագերէցը տօնի մը որ իւր ժողովը գեան քարոզ որ կու տար, քարոզին սրտաշարժ կտորներէն ժողովսդեան սիրտը փաձեկելով՝ կու լային ու կուրծքերնին կը ծեծէէին . մէջերնին միայն մէկ հոգի մը կար, որ անտարեր փայտի պէս կեցած մամիկ կընէր քարոզչին : Ձայս որ կը տեսնեն քոլլները, գայթակղելով ան մարդուն վրան՝ կը

դառնան կ'ըսեն անոր . “ Դու ինչ քարտսիրտմարդ ես, ասանկ սրտաշարժ քարտչին չես զգածուիր, պաղ պաղ կեցեր կը նային . մենք ամենքնիս կու լանք, գու և ոչ կաթիլ մը արցունք թափեցիր,, Պատասխան կու տայ այն մարդը . “ Թողութիւն ըրէք, պարոններ . ես ձեր աւագերէցին թալէն ըմբ , :

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՌԱԾԻՔ

Երբ մեծին կատոնի հարցուցին թէ հռովմ, ուր ամէն երկելի անձնոց համար արձաններ կը կան . դնեն, ինչո՞ւ իրեն համար արձան մը չկանգնե . ցին . սպատամատնեց . Աւելի վեր կը սեպեմ այդ, պէս չկանգնելուն պատճառը հարցընելնիդ, քան թէ կանգնելուն :

Իրաւ որ շատ ամբարիշտներ կան որ հարուստ են, ու շատ առաքինի մսրդիկ աղքատ են . բայց առաքինին իր աղքատութեան մէջ գոյն կ'ապրի, ամբարիշտը իր հարստութիւններուն մէջ կը տանջուի : Առաքինին իր առաքինութիւններուն չես հարց, տութիւն ալ կրնայ ունենալ, և մեռնելու ատեն իր առաքինութիւններուվը պիտի պսակուի : Խսկ արիշաը իր հարստութիւններուն հետ առաքի, նութիւն չիրնար ունենալ, և մեռնելու ատեն իր ամբարշտութիւններովը պիտի դատապարտուի :

Ո՞ր բանն է այն՝ որ գեղեցիկ ալ քըլլայ կը սիրուի : Մարդկանց իրենց հայրենիքը . — Ծնողաց իրենց որդիքը . — Որդւոց իրենց առւնը . — Ամէն մարդուն իր անձը :

Ամէն բանի մէջ անյարմարութիւն գտնովը շին . թած է և տկարամիտ : Ամէն բանի մէջ ալ յարմարութիւն գտնովը յան . դուգն է և անմիտ :

Կ'ուղես որ ամէն խօսքդ ամենուն հաճելի ըլլայ . տասը մատած է ու մէկն ըսէ : Կ'ուղես որ ամէն գործքդ յարդ ունենայ . տասը փորձէ մէկ մը գործէ : Կ'ուղես որ մտած ճամբէդ ետ չդառնաս . անոր մէջի ճամբորդները առաջ դիտէ : Կ'ուղես որ ինչ խելքի աէր ըլլալդ իմանաս . քու որսակցիդ խելքը քննէ . և մի տարակուսիր որ քուկդ ալ անոր նման է :